

---

---

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԶԳԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ,  
ՖՐԻԴՐԻԽ ԿԱՌԼ ԱՆԴՐԵԱՍ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Հանրահայտ փաստ է, որ հայրենիքում, պատմական դրդապատճառներից ելնելով, բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ հայ երիտասարդությունն ուսում էր փնտրում օտար երկրներում, մասնավորապես՝ Ռուսաստանի և եվրոպական երկրների համալսարաններում:

Գերմանիայում կրթություն ստացած ուսանողության առաջին սերնդի ներկայացուցիչների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մեծանուն արևելագետ, իրանագետ, բանասիրության և արևելյան լեզվագիտության ոլորտում իր անջնջելի ավանդը ներդրած հայազգի գիտնական Ֆրիդրիխ Կառլ Անդրեասը՝ Բագրատունին (1846–1930): Նրա կյանքն ու հասարակական գործունեությունը հայագիտության մեջ լուսաբանված չէ: Մեզ համար անհասկանալի պատճառներով, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, հայագիտությամբ զբաղվող ոչ մի հետազոտող, բացի համառոտ կենսագրական ակնարկներից, նրան չի անդրադարձել: Անդրեասի կենսագրությունը իսկապես խորհրդավոր է: Նախքան Գյոթինգեն տեղափոխվելը նրա կենսագրությունը «բաղկացած է մի շարք դրվագներից» և ոչ բոլոր դեպքերում «հավաստի աղբյուրներից»<sup>2</sup>: Այսպես է սկսվում Ֆրիդրիխ Կառլ Անդրեասի կենսագրականը Գյոթինգենի Գեորգ-Ավգուստ համալսարանի նշանավոր շրջանավարտներին և գիտնականներին նվիրված երկհատորյակում: Աղբյուրները միահամուռ են այն տեսակետում, որ Անդրեասը հայազգի էր. դա են պնդում ինչպես գերմանական հանրագիտական հրապարակումները, նրա երբեմնի ուսանողները, այնպես էլ կնոջ՝ ծագումով հրեա, գերմանացի ականավոր գրող, հոգեվերլուծաբանական դպրոցի կարկառուն ներկայացուցիչ, գերմանացի փիլիսոփա Նիցշեի և ավստրիացի հոգեբան Ջիզմունդ Ֆրոյդի գործընկեր Լու Անդրեաս-Սալումեի (1861–1937 թթ.) կենսագիրները<sup>3</sup>: Անդրեասը, ի սկզբանե՝ Բագրատյան, ծնվել է 1846 թ. ապրիլի 14-ին նիդեռլանդական Հնդկաստանում՝ Բաթավիայում (այժմ՝ Ինդոնեզիա, Ջակարտա)՝ ռազմական բժիշկ Բագրատյանի ընտանիքում: Մայրը՝ տիկին Վայցը, գերմանական և մալազիական

---

<sup>1</sup> H. Goltz und A. Meissner. Deutschland, Armenien und die Türkei 1895–1925.

<sup>2</sup> K. Arndt, G. Gottschalk und R. Smend (Hrsg.). Göttinger Gelehrte. Die Akademie der Wissenschaften zu Göttingen in Bildnissen und Würdigungen 1751–2001: 2 Bde., Band I, Wallstein Verlag, Göttingen, 2001, S. 312.

<sup>3</sup> M. Wiesner-Bangard, U. Welsch. Lou Andreas Salomé. Wie ich dich liebe Rätselfleben. Eine Biographie. Leipzig, 2002.

ծագում ուներ<sup>4</sup>: Իր տիկնոջ՝ Մալոմեի կենսագիրները հաղորդում են նաև այն փաստը, որը Անդրեասը (Բագրատյանը կամ Բագրատունին) ծագում է հայկական արքայական ընտանիքից: Նա ընդամենը 6 տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Համբուրգ: Այստեղ էլ նա սկսեց իր ուսումնական առաջին քայլերը՝ հաճախելով մասնավոր դասընթացների: Կարճ ժամանակ անց հայտնաբերվեց օտար լեզուները յուրացնելու նրա բացառիկ տաղանդը: Պատանին ընդամենը 14 տարեկան էր, երբ սկսեց այցելել Գենֆի գիմնազիան և արդեն տիրապետում էր գերմաներեն, անգլերեն, հոլանդերեն, ֆրանսերեն, լատիներեն և հունարեն լեզուներին: Ավարտելով գիմնազիան՝ Անդրեաս-Բագրատունին շարունակում է կրթությունը Հալեի, Եռլանգենի, Գյոթինգենի և Լայպցիգի համալսարաններում՝ ուսանելով արևելյան և դասական բանասիրություն, պատմություն, փիլիսոփայություն<sup>5</sup>: Գլխավոր հետաքրքրությունը, սակայն, իրանագիտությունն էր: Անդրեասն արևելագիտության դոկտորի կոչման ներկայացրած իր՝ «Ներդրումներ միջին պարսկերենի՝ պահլավերենի ճշգրիտ իմացության վերաբերյալ: Գիրն ու արտասանության համակարգը» ատենախոսությունը պաշտպանեց 1868 թ.՝ 22 տարեկան հասակում, Եռլանգենի համալսարանում: Խորհրդավոր է և այն, որ Անդրեասի ատենախոսությունն այն սակավաթիվ աշխատություններից է, ինչն անհասու է ժամանակակից հետազոտողներին. ատենախոսությունը համարվում է կորած<sup>6</sup>: Գերմանիայի համար ոչ հասկանչական է այն, որ տասնյակ համալսարանական գրադարաններ, որոնք մի քանի հարյուրամյակ քարտավորում և պահպանում են հրատարակված բոլոր ատենախոսությունները, կորցրել են Անդրեասի՝ իրանագիտության մեջ բացառիկ կարևորություն ներկայացնող աշխատությունը: Ատենախոսությունը պաշտպանելուց հետո Անդրեասը մեկնում է Կոպենհագենի համալսարան՝ սովորելու հյուսիսային Եվրոպայի լեզուները<sup>7</sup>: 1870–1871 թթ. կամավոր զինվորագրվելով և մասնակցելով պրուս-ֆրանսիական պատերազմին՝ Անդրեասին հաջողվում է հրաշքով փրկվել ու կենդանի վերադառնալ Լե Մանի հայտնի ճակատամարտից: Պատերազմն ավարտվելուն պես նա կրկին շարունակեց ուսումը, այս անգամ՝ Քիլի համալսարանում<sup>8</sup>: Բնչպես նշում է Անդրեասի աշակերտներից հայտնի իրանագետ Վոլֆգանգ Լենտցը, իր երբեմնի ուսուցիչը 1875–1881 թթ. ընթացքում դաշտային հետազոտություններ իրականացնելու նպատակով գտնվել է Հնդկաստանում, որտեղ ուսումնասիրել է փարսերի լեզուն ու մշակույթը, նաև՝ հարավային Երանում: Համաձայն Լենտցի՝ Անդրեասի հետաքրքրության լայն շրջանակները հասնում էին մինչև

<sup>4</sup> Neue Deutsche Biographie 1, Berlin, 1953, S. 284.

<sup>5</sup> M. Wiesner-Bangard, U. Welsch. Նշվ. աշխ., էջ 288:

<sup>6</sup> M. Back. Acta Iranica. Encyclopédie permanente des études iraniennes. IIIe série, Textes et mémoires. Vol. VIII, Die Sassanidischen Staatsinschriften: Studien zur Orthographie und Phonologie des Mittelpersischen der Inschriften zusammen mit einem Textcorpus der behandelten Inschriften, Téhéran; 1978, S. 506.

<sup>7</sup> Chronik der Georg-August-Universität zu Göttingen für das Rechnungsjahr 1904, Göttingen, 1904, S. 54.

<sup>8</sup> M. Wiesner-Bangard, U. Welsch. Նշվ. աշխ., էջ 288, E. Pfeiffer. Andreas-Salome: Lebensrückblick. Frankfurt am Main/Leipzig, S. 187.

հնդաֆղանական սահմանը՝ այնտեղի ժողովուրդների մշակույթն ու լեզուն, իսկ Կովկասում նրան սկսել էր հետաքրքրել օսերենը<sup>9</sup>: Պարսկաստանում անցկացրած վաղ հնագիտական և լեզվագիտական աշխատանքի վերաբերյալ կցկտուր տեղեկություններ են պարունակվում միայն Լու Անդրեաս-Սալումեի գիտաստեղծագործական ժառանգությանն ու կենսագրությանը նվիրված աշխատություններում: Այդ աղբյուրների համաձայն՝ Անդրեասի անսահման տաղանդն ու գիտելիքներն այնպիսի թեժ անհամաձայնություն էին ստեղծել իր և արշավախմբի մյուս մասնակիցների միջև, որ դրա արձագանքները հասել էին Բեռլին: Գերմանիայից պահանջեցին, որ պեսոգի նա լքի արշավախումբը և վերադառնա: Անդրեասն անկոտրում էր, չենթարկվեց: Շուրջ վեց տարի իր միջոցների հաշվին համառոտ են մնալով Պարսկաստանում, շարունակելով լեզվագիտական ու հնագիտական պրպտումները, ամբողջությամբ ծախսելով սեփական միջոցները՝ նա ուսումնասիրում էր Արևելքը: Անդրեասը Գերմանիա է վերադառնում ամբողջությամբ սնանկացած և 1887 թվականից որպես պրոֆեսոր սկսում դասավանդել Բեռլինի համալսարանում: Նույն թվականին ամուսնացել է Լու Սալումեի հետ: Բեռլինի համալսարանում նա շատ եռանդուն է եղել, ինչը գործընկերների մոտ նախանձ է առաջացրել: Հյուսած դավերի արդյունքում երկու տարի անց նա հեռացել է Բեռլինի համալսարանից: Համաձայն Սալումեի կենսագիրների՝ այն գլխավոր պատճառը, որ Անդրեասը չհրատարակեց իր առանց այն էլ գիտական հարուստ աշխատությունների մի մասը և նրա լայն գիտելիքներն ու չհրատարակված աշխատությունները բաժին հասան իր աշակերտներին, շրջապատի Եսամոլությունն էր<sup>10</sup>: Նրան միշտ խոչընդոտել են: «Գյոթինգենի ուսյալները» վերը հիշատակված աշխատությունը հավելում է, որ 1882 թ., երբ Անդրեասը (անհամաձայնության պատճառով) կարճ ժամանակով վերադարձավ Բեռլին, նա ուղեկցում էր Պարսկաստանի արքայազներից մեկին (Բհտիսամ-էդ-Դաուլին)՝ որպես նրա ընկեր և գլխավոր ուղեկից<sup>11</sup>: Նույն թվականին գերմանացի հայտնի լուսանկարիչ և իրանագետ Ֆրանց Շտոլցեի, արևելագետ Թեոդոր Նյոլդեկեի հետ Ֆ. Անդրեասը հրատարակում է երկհատորյա «Պերսեպոլիս: Պերսեպոլիսի, Իստաքիսի, Պասարգադայի, Շահպուրի քաղաքային և սասանյան հուշարձաններն ու արձանագրությունները»<sup>12</sup> աշխատությունը՝ գիտական լայն շրջաններին ծանոթացնելով Պարսկաստանի հարավում իր անցկացրած հետազոտությունների արդյունքներին: Սակայն նրա ջերմ փոխհարաբերությունները պարսկական արքունիքի հետ շատ չնչին ազդեցություն ունեցան Գերմանիայում դիրքերի ամրապնդման համար: 1891 թ. պրոսական մշակույթի նախարարության հետ ծագած վեճի հետևանքով նա առժամանակ զրկվեց ձեռք բերած դիրքից՝ պրոֆեսորի կոչումից և Բեռլինի համալսարանում դասավանդելու իրավունքից:

<sup>9</sup> W. L e n t z. Andreas, Friedrich Carl, German Iranologist (1846–1930), in: Encyclopedia Iranica. Vol. II, Costa Mesa: Mazda Publishers, 1985, p. 27.

<sup>10</sup> M. Wiesner - Bangard, U. Welsch. Նշվ. աշխ., էջ 288:

<sup>11</sup> K. Arndt, G. Gottschalk und R. S mend (Hrsg.). Նշվ. աշխ., էջ 312:

<sup>12</sup> T. N o l d e k e. F. C. A n d r e a s; F S t o l z e. Persepolis; die achaemenidischen und sasanidischen denkmaler und inschriften von Persepolis, Istakhr, Pasargadae, Sha□kpu□r. Berlin, 1882.

Շուրջ մեկ տասնամյակ, ընտանեկան բարդ իրադրության պայմաններում, Անդրեասն անդուլ շարունակում է գիտական աշխատանքը՝ ապրուստի միջոցները վաստակելով օտար լեզվի մասնավոր դասընթացների միջոցով:

Չսահմանափակվելով միայն լեզվական բնույթի հետազոտություններով՝ Անդրեասը 1896 թ. անդրադարձավ նաև XIX դարի երկրորդ կեսին Պարսկաստանում լայն ծավալ ստացած բաբինների կրոնական շարժմանը և կրոնական աղանդների ու ուղղությունների վերաբերյալ «Բաբինները Պարսկաստանում: Աղբյուրները և անձնական ուսումնասիրության արդյունքները»<sup>13</sup> հրատարակեց որպես մենագրություն: Այս շրջանում լույս տեսան հելլենիզմին, արամերեն լեզվին, Բեռլինի թանգարաններում պահպանվող սասանյան և արեմենյան շրջանի ձեռագրերին, մահմեդական տարբեր աղանդներին և «Ղորանին» առնչվող նրա հետազոտությունները<sup>14</sup>:

1902–1903 թթ. տեղի ունեցավ դեպի Թուրքիան՝ Չինաստան, պրուսական թագավորական հնագիտական առաջին գիտարշավը: Անդրեասն այդ արշավախմբում ընդգրկված չէր, այն գլխավորում էր հայտնի արևելագետ Ֆրիդրիխ Մյուլլերը (1863–1930 թթ.): Ի թիվս այլ հնագիտական հայտնագործությունների, արշավախումբը հայտնաբերեց և Բեռլին տեղափոխեց միջին պարսկերենի բազմաթիվ ձեռագրեր՝ մանիքեյան տեքստերը<sup>15</sup>: Վրա հասավ Անդրեասի աստեղային ժամը: 1903 թ. նա նշանակվեց Գյոթինգենի համալսարանի Արևմտյան Ասիայի լեզուների ուսումնասիրության ամբիոնի վարիչ, որը գլխավորեց մինչև կյանքի վերջին վայրկյանը՝ ավելի քան 27 տարի: Գյոթինգենի համալսարանում սկսվում է մեծ իրանագետ-արևելագետի բեղմնավոր աշխատանքը, նրա գլխավորած ամբիոնը վերածվում է Թուրքիանի արշավախմբի բերած հնագիտական և լեզվագիտական հարուստ նյութի ուսումնասիրության կենտրոնի: Նա ստեղծում է իրանագիտության այն դպրոցը, որը հայտնի է նաև որպես «Անդրեասի դպրոց» անվամբ: Նրա աշակերտներն էին տարբեր սերունդների պատկանող, հայտնի իրանագետ-արևելագետներ, պրոֆեսորներ Կայ Բառը, Արթուր Քրիստենսենը, Բեռնհարդ Գայգերը, Վալտեր Բրունո Հեննինգը, Պաուլ Հոռնը, Վոլֆգանգ Լենտցը, Հերման Լոմմելը, Օսկար Մանը, Յակոբ Պոլոցկին, Կառլ Հադանկը և այլ արևելագետներ<sup>16</sup>:

Աշխատելով Թուրքիանի արշավախմբի բերած մանիքեյան ձեռագրերի վրա՝ Անդրեասը կարողացավ աննախընթաց արագությամբ վերծանել դրանց զգալի հատվածը՝ ապացուցելով, որ դրանց մի մասը պարթևերեն է, իսկ մյուսը՝ միջին պարսկերեն: Արագորեն տարանջատելով տեքստերում պարթևերենը և այն կոչելով՝ «հյուսիսային բարբառ»՝ իրանագետը սահմանեց մեկ այլ բարբառ՝ «պահլավերենի բարբառը», որը նա կոչում էր

<sup>13</sup> F. C. Andreas. Die Babis in Persien: ihre Geschichte und Lehre quellenma $\square$ ssig und nach einiger Anschauung dargestellt, Leipzig, 1896.

<sup>14</sup> F. C. Andreas. Festschrift Friedrich Carl Andreas zur Vollendung des siebzigsten Lebensjahres am 14. April 1916, Leipzig, 1916, S. 138–140.

<sup>15</sup> F. Rosenthal. Die aramaistische Forschung seit Th. No $\square$ ldeke's Ver $\square$ ffentlichungen. Leiden, 1964, S. 79.

<sup>16</sup> W. Lentz. Նշվ. աշխ., էջ 27:

սոգոյան լեզու: Այս բացահայտումն արևելագիտության մեջ շրջանառության մեջ դրվեց որպես «Անդրեասի տեսություն»: 1904 թ. Պրուսիայի գիտությունների ակադեմիան Ֆրիդրիխ Կառլ Անդրեասին ընտրեց ակադեմիայի իսկական անդամ<sup>17</sup>: Հասարակական գիտությունների ոլորտում նա առաջին և միակ հայազգի գիտնականն էր, որ կարողացավ արժանանալ պրուսական ակադեմիայի իսկական անդամ լինելու կոչմանը:

Գիտնականն առաջ քաշեց իր տեսությունը դեռևս 1902 թ. Համբուրգում տեղի ունեցած «Արևելագետների միջազգային գիտաժողովի» ընթացքում, այն էլ միայն համառոտ: «Ավեստայի այբուբենի ծագումն ու նրա սկզբնական հնչյունային համակարգը» վերտառությամբ գիտաժողովին ներկայացրած թեզը հրատարակվեց մեկ տարի անց «Արևելագետների XII` 1902 թ. Համբուրգում տեղի ունեցած գիտաժողովի նյութերի ժողովածուի» մեջ<sup>18</sup>: Ո՛չ Անդրեասը և ո՛չ էլ նրա աշակերտներից որևէ մեկը այդպես էլ երբեք չմանրամասնեց այդ տեսությունը, նրա հիմքերն ու աղբյուրները: Առաջընթացն այն էր, որ Անդրեասն իր աշակերտներից Յ. Վաքենագելի հետ ապացուցեց, որ զրադաշտության սուրբ գրքի՝ «Ավեստայի» հնագրությունը ծագում է «Պահլավի գրքից» („Buch Pahlavi“): Հիմնավորելով, որ «Ավեստայի» յուրաքանչյուր տառ իր հնագիտական ակունքներն է ստանում պահլավերենից, Անդրեասը հիմք դրեց «Ավեստայի» մաս կազմող I, II, IV և V «գաթաների» (հիմների) ընթերցանությանը և մեծ մասամբ կիրառելով լեզվահամեմատական մեթոդը՝ հիմնավորեց, որ «Ավեստայում» կիրառված լեզուն նույն պարթևերենն է, որը պատմության և աշխարհագրական ազդեցությունների ընթացքում կրել է հնչյունաբանական փոփոխություններ՝ պայմանավորված լինելով նաև հիմների երաժշտական ազդեցությամբ<sup>19</sup>: Այս մոտեցումը ծնունդ տվեց մեծ բանավեճերի: Ընդ որում, մինչ օրս էլ քննարկման առարկա է, քանզի իրանագետներից, այդ թվում՝ «Անդրեասի դպրոցի» ներկայացուցիչներից շատերը կարծում էին, որ «Ավեստայի» լեզուն և հնչյունաբանական փոփոխությունների՝ Անդրեասի և Վաքենագելի առաջ քաշած երաժշտության ներգործությունը սխալ է<sup>20</sup>:

Թուրքանից բերված մանիքեյան տեքստերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում անգլիացի իրանագետ Դեյվիդ Մակ Քենզին: Վերջինիս համաձայն՝ այդ արձանագրություններն Անդրեասին Բեռլինից ուղարկվել է լուսանկարների տեսքով: Այդ լուսանկարների մի մասն այսօր էլ միակ սկզբնաղբյուրն է, քանզի բնագրերը Բեռլինից անհետացան կամ ոչնչացան<sup>21</sup>: Մակ Քենզին իրավացիորեն

<sup>17</sup> Նույն տեղում, նաև՝ K. Arndt, G. Gottschalk und R. S mend (Hrsg.). Նշվ. աշխ., էջ 312:

<sup>18</sup> Verhandlungen des XII. Internationalen Orientalisten-Kongresses in Hamburg 1902, Leiden, 1903.

<sup>19</sup> F. C. Andreas, J. Wackernagel, Zarathustra (Zoroaster): Die vierte Ghatha des Zurathustro, Goettingen, 1911; Zarathustra (Zoroaster): Die erste, zweite und funfte Ghatha des Zurathustro, Goettingen, 1913.

<sup>20</sup> B. Schlerath. The Andreas Theory, in: Andreas, Friedrich Carl, German Iranologist (1846–1930), Encyclopedia Iranica. Vol. II, Costa Mesa, 1985, pp. 28–30.

<sup>21</sup> Հանրահայտ իրողություն է, որ Երրորդ Ռեյխի առաջնորդ և Գերմանիայի կանցլեր Ադոլֆ Հիտլերն ու նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսները, գալով իշխանության, սկսեցին մեկնել պատմությունն ու մշակույթը՝ այն ծառայեցնելով իրենց քաղաքական շահերին: Այս շրջանում «Ավեստան» նույնպես սկսեցին մեկնաբանել քաղաքական նկատառումներով: Գիտնականներից ոմանք նախքան այդ արդեն հայտնել էին այն տեսակետը, որ հնդկաիրանական ծագում ունեցող ժողովրդի այն մասը, որը գաղթի արդյունքում հաստատվել էր Երանում, կոչվում էր նաև արիացի: Այդ տեսության համաձայն՝ արիացիները ոչ միայն ստեղծել են «Ավեստան», այլև ավելի ուշ՝ «Ավեստայի» հենքի վրա, զրադաշտականությունը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս O. O. Espín, J. B. Nickoloff. An Introductory

նշում է, որ Անդրեասի թողած գրառումները և տեքստերի վրա կատարած նկատումները մեծ ազդեցություն են գործել, որպեսզի Ֆ. Մյուլլերը հրատարակի մանիքեյան տեքստերի քերականությանն ու բառիմաստին, միջին պարսկերենի և պարթևերենի տարբերակիչ առանձնահատկություններին նվիրված իր առաջին աշխատությունները: Մանիքեյան արձանագրությունների տառադարձումն ու դրանց թարգմանությունները ոչ միայն այդ սկզբնաղբյուրների միակ պահպանված մասունքներն են, այլև մինչ օրս չհրատարակված մասն են: Նույնը, համաձայն Մակ Քենգու, վերաբերում է մանիքեյան սոգդյան տեքստերին: Անդրեասն սկսել էր կազմել նաև սոգդյան լեզվի բառարանը: Մակ Քենգին պնդում է, որ Անդրեասի կողմից կատարված սոգդյան քրիստոնեական տեքստերի թարգմանությունը շրջանառության մեջ է դրվել այլ արևելագետների կողմից, որոնց մեծ մասը նրա երբեմնի աշակերտներն էին: Դրանց լավագույն օրինակներն են բարեկամական ամուսնությունների, պարսկական առասպելների, իրանական լուսնային ժամանակացույցների, մանիքեյան օրացույցների, փարսիների ծեսերի և այլոց վերաբերյալ հրապարակումները<sup>22</sup>:

Անդրեասի համար Գյոթինգենի համալսարանում անցկացրած կյանքի ողջ շրջանը եղել է ոչ միայն բեղմնավոր գիտական աշխատանքի շրջան, այլև՝ մանկավարժական: Այստեղ նա ստեղծեց հայտնի «Անդրեասի դպրոցը»՝ անմնացորդ նվիրվելով իր աշակերտներին: Այդ նվիրումն ու գիտելիքներն անսահման են եղել. Անդրեասը, առանց որևէ տատանումի, աշակերտներին է տրամադրել իր անտիպ մենագրությունները, արևելյան մահացած և կենդանի լեզուների իր կազմած բառարանները, հնչյունաբանական ու տառադարձման բարդ, մաթեմատիկական աղյուսակների նմանվող, բազում լեզուների տառադարձման, դրանց քերականության և ուղղագրության, գիտության մեջ առաջնեկ ու անտիպ աշխատությունները<sup>23</sup>: Այս յուրահատուկ, սեփական մաքառումների ու գրկանքների շնորհիվ իմացության մեջ կատարելության հասած մարդու աննախադեպ վերաբերմունքն այնքան բացառիկ էր, որքան բացառիկ էր նաև այն, որ Պրուսիայի գիտությունների թագավորական ակադեմիան 1904 թ. լիարժեք անդամ էր ընտրում նրան՝ օտար հայրողուն: Դրա լավագույն օրինակներից է այն, որ Անդրեասի աշակերտներից Վալտեր Բրունո Հեննինգը, արդեն գտնվելով Բեռլինում, ուսուցչի մահից քիչ անց՝ 1932–34 թթ. ընթացքում,

Dictionary of Theology and Religious Studies, Collegeville, 2007, pp. 85–86): Մեր համոզմամբ՝ մանիքեյականությանն ու «Ավեստային» առնչվող ինչպես Թուրքանի արշավանքի ընթացքում բերված արձանագրությունների, այնպես էլ Ֆ. Անդրեասի արխիվից բացակայող որոշ փաստաթղթերի անհետացման պատճառ կարող է ծառայած լինել նաև այս հանգամանքը: Նացիոնալ-սոցիալիզմի հետևորդները դրանք համարում էին սուրբ մասունքներ՝ առաջնահերթ կոմպաններ, ասպացուցելու համար իրենց արևելյան ծագումն ու արիականությունը:

<sup>22</sup> D. N. MacKenzie. Նշվ. աշխ., էջ 28–29:

<sup>23</sup> W. Lentz. Նշվ. աշխ., էջ 27:

օգտագործելով Անդրեասի դասախոսությունները և երկար տարիներ մշակած մանիքեյան տեքստերի ընթերցման սկզբունքները, արագորեն թարգմանեց «Չինական Թուրքեստանից» բերված մանիքեյան դեռ չընթերցված տեքստերը և ներկայացրեց դրանք Պրուսիայի գիտությունների ակադեմիային<sup>24</sup>: Ինչպես պնդում է նշանավոր արևելագետ Մակ Քենգին, Անդրեասի գոյություն ունեցող մշակումների շնորհիվ է, որ նրա աշակերտներից Կայ Բառը 1933 թ. կարողացավ հրատարակել պահլավերեն թարգմանված որոշ Մադոնների փրկված մասնիկները<sup>25</sup>: Իրանում անցկացրած տարիների ընթացքում Անդրեասն ուսումնասիրել և գիտական հսկայական նյութեր էր բերել Ֆարսի, կենտրոնական Իրանի (Միվանդի, Յազդի և Մոյի) բարբառների, նաև քրդական որոշ բարբառների վերաբերյալ: Այս նյութերից որոշ մասի հրատարակման բախտը վիճակված չէր նրան: Դրանց մի մասը՝ «Իրանական բարբառների գրառումներ» խորագրով, 1939 թ. հրատարակվեց Կայ Բառի և Արթուր Քրիստենսենի ջանքերով<sup>26</sup>: Մակ Քենգու հավաստմամբ, Ֆարսի բարբառային նյութերը, որոնք մշակման էին հանձնվել Հեննինգին, վերադարձվել են Գյոթինգեն, քանի որ Կալիֆոռնիայում 1967 թ. Հեննինգի մահից հետո դրանք մնացել էին չհրատարակված<sup>27</sup>: Անտիպ են համարվում օսերեն լեզվի, ոչ իրանական լեզվաընտանիքին պատկանող Բրահույի լեզվի քերականության վերաբերյալ այն հարուստ գրառումները, որոնք Անդրեասը կատարել է Գվադարում 1876 թ.՝ Հնդկաստանից Պարսկաստան վերադառնալիս: Մակ Քենգին նշում է, որ Անդրեասի արխիվում են պահվում, ենթադրաբար, ոչ միայն իրեն պատկանող մենագրություններ ու ձեռագրեր: Նա կարծում է, որ Մեսրոֆ Կարամին է պատկանում (նրա եզրահանգմամբ՝ հայագգի քրիստոնյա) Մոքրի բարբառին առնչվող գրառումները: Համաձայն Մակ Քենգու՝ սբ. Մաթևոսի հայտնության, ասորական տարբեր ժողովրդական ավանդությունների ասորերեն լեզվով, գեվերի բարբառով գրառումներն ու մշակումները, հավանաբար, նույնպես կատարվել է մի ասորի քրիստոնյայի կողմից<sup>28</sup>: Ֆ. Անդրեասի ամենամեծ նվաճումներից է եղել նաև զագաների լեզվի, ազգաբանության ու պատմության վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները: Ինչպես վերը հիշատակված աշխատությունները, այնպես էլ զագաների ուսումնասիրության արդյունքներն ավարտին են հասցրել նրա աշակերտներից Օսկար Մանը և Կառլ Հադանկը: 1932 թ. գլխավորապես Հադանկի ջանքերով լույս տեսած «Զագա լեզվի բարբառները» աշխատությունը նույնպես մեծ մասամբ գրվել է՝ հիմք ընդունելով 1906 թ. Կասպից լճի հարավում բնակվող պարթևական ցեղերի ուսումնասիրության արդյունքում Անդրեասի կատարած այն եզրահանգումը, որ դայլեմիները (Dailemi) կամ դելեմիները (DUlemS) զագաների նախորդներն են եղել,

<sup>24</sup> F. C. Andreas, W. B. Henning, *Mitteliranische Manichaica aus Chinesisch-Turkestan*, Berlin, 1932–1934.

<sup>25</sup> F. C. Andreas, K. Barr, *Bruchstücke einer Pehlevi-Uebersetzung der Psalmen*, Berlin, 1933.

<sup>26</sup> F. C. Andreas, A. Christensen, K. Barr, *Iranische Dialektaufzeichnungen*, Berlin, 1939.

<sup>27</sup> D. N. MacKenzie. *Նշվ. աշխ.*, էջ 28–29:

<sup>28</sup> Նույն տեղում:

ինչով և բացատրվում է զազաների կողմից իրենց «դիմիլի» („Dimili“) անվանելը: Գիտության մեջ լինելով այս տեսության առաջնեկը՝ Անդրեասի կարծիքով՝ զազաները ծնունդ են առնում հին դայլամիտներից և ուսումնասիրելով զազաների տարբեր բարբառները՝ նա որակեց լեզուն որպես իրանական<sup>29</sup>:

Արևելագետին հանգրվանած Գյոթինգենի համալսարանը մեծ շուքով է նշել գիտնականի 70-ամյա հորելյանը՝ այս կապակցությամբ 1916 թ. հրատարակելով Անդրեասի ծննդյանը նվիրված գիտական աշխատությունների ժողովածուն, որի մեջ իրենց հոդվածներն են հրատարակել մեկ տասնյակից ավելի նշանավոր արևելագետներ: Հրատարակության նախաձեռնողները հոգ էին տարել նաև, որպեսզի գրքի վերջում տպագրվի անվանի գիտնականի աշխատությունների կենսամատենագիտությունը<sup>30</sup>: Տրամաբանական է, որ մատենագիտությունն ամբողջական չէր, քանզի Անդրեասը հաջորդ տարիների ընթացքում ևս հրապարակել է բազմաթիվ այլ աշխատություններ՝ իր գիտական մենագրությունների, հոդվածների, թեզերի ցանկը հասցնելով մի քանի հարյուրի: Նրա աշխատությունների ամբողջական մատենագիտությունը, ցավոք, մինչ օրս կազմված չէ, իսկ որոշ, տարբեր առիթներով հիշատակվող ուսումնասիրությունների ու նամակների անհետացման պատճառները՝ չուսաբանված:

Ֆ. Անդրեասը մահացավ 1930 թ. հոկտեմբերի 3-ին՝ 85 տարեկան հասակում, քաղցկեղից: Նրա շիրիմը գտնվում է Գյոթինգենի քաղաքային գերեզմանատանը: Պատկառելի տարիքում անգամ, ինչպես գրում են Լու Անդրեաս-Սալոմեի կենսագիրները, նա առույգ էր, եռանդով լի և բարեհոգի իրեն շրջապատողների նկատմամբ: Նույնիսկ տառապելով ծանր հիվանդությամբ՝ նա գրեթե ամեն օր այցելում էր կնոջը՝ համալսարանական հիվանդանոցում նրան հատկացված աշխատասենյակում հոգեբանական փորձեր կատարելիս<sup>31</sup>: Անդրեասի մահից հետո ծանրանում է նաև կնոջ վիճակը: 1933 թ. գերմանական նացիոնալ-սոցիալիստական աշխատավորական կուսակցության իշխանության գալը մի նոր թափ է հաղորդում հակասեմիտական տրամադրություններին ու բռնություններին: Լու Անդրեաս-Սալոմեի մահից (1937 թ.) մի քանի օր առաջ նրա տուն են ներխուժում գեստապոյի աշխատակիցները, բռնագրավում ողջ փաստաթղթերն ու հրատարակությունները, շեշտելով, որ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայի

<sup>29</sup> M. Th. Houtsma. E. J. Brill's First Encyclopaedia of Islam 1913–1936, Leiden, 1987, p. 1152.

<sup>30</sup> F. C. Andreas. Festschrift Friedrich Carl Andreas zur Vollendung des siebzigsten Lebensjahres am 14. April 1916, Leipzig, 1916, S. 137–142.

<sup>31</sup> L. Andreas-Salomé. Rainer Maria Rilke, Hamburg, 2010, S. 137. Գյոթինգենում եղած ժամանակ այցելեցինք Ֆ. Անդրեասի գերեզմանին, դեռևս որևէ պատկերացում չունենալով ոչ շիրմաքարի տիրոջ, և ոչ էլ նրա ազգակից լինելու փաստի մասին: Միայն ամիսներ անց պարզ դարձավ, որ Գյոթինգենի քաղաքային գերեզմանատանը գտնվող այն համեստ շիրմաքարը, որը կրում է անվանի գիտնականի ու նրա կնոջ անունը, պատկանում է մեծ արևելագետին և հայորդուն: Այն սակավաթիվ այցելուները, որոնք երբեմն ծաղիկներ են դնում շիրմաքարի առջև, գլխավորապես գերմանացիներ են, որոնք գալիս են խոնարհվելու Անդրեասի և Լու Անդրեաս-Սալոմեի շիրմաքարին: Հատկապես մեծ են Սալոմեին այցելողները, քանզի նրա անվամբ է կոչվում Գյոթինգենի համալսարանի հոգեկան վերլուծության և հոգեկան թերապիայի ինստիտուտը:



համար «հրեական գիտությանը» տեղ հատկացված չէ<sup>32</sup>: Անդրեասի կյանքին անդրադարձած հեղինակների ուշադրությունից վրիպել է նաև այս փաստը: Մեր կարծիքով՝ Անդրեաս-Սալոմեի տանը, հնարավոր է, եղած լինեին Անդրեասին պատկանող որոշ ձեռագրեր կամ նամակներ, մի հանգամանք, որի բացահայտումը կարող էր նպաստել Անդրեասի կյանքի ու աշխատությունների որոշ անհայտ էջերի լուսարանմանը:

Իր մահից հետո, որպես գիտական ժառանգություն, բացի հսկայական քանակությամբ անտիպ ձեռագրերի ու աշխատությունների, Անդրեասը թողեց մի քանի հազարը գերազանցող նամակներ: Նա թղթակցություն է վարել բազմաթիվ արևելագետների, քաղաքական և հասարակական գործիչների, հոգևորականների, ընկերների, ուսանողների հետ, որոնք ոչ միայն կապված էին նրան իբրև հայրենակիցներ: Ի թիվս հայերի, նա հարաբերություններ է պահել օսերի, պարսիկների, Գերմանիայում ապաստանած օսմանյան նախկին հպատակների հետ, որոնք, հավատալիքով լինելով, դարձել էին քրիստոնյա: Այն բազմաթիվ օտարազգիները, որոնք թղթակցել են Անդրեասի հետ, օժանդակել են նրան իր լեզվագիտական, մշակութաբանական, ազգագրական, պատմագիտական հետազոտություններում: Անդրեասի թողած փաստավավերագրական ողջ ժառանգությունը, Գերմանիայում ընդունված ավանդույթի համաձայն, հանձնվել է Գյոթինգենի համալսարանի գրադարանին: Անդրեասի արխիվն այսօր գտնվում է համալսարանի հին՝ «Ասիա-Աֆրիկա» անունը կրող գրադարանում՝ ի լրումն բազմաթիվ այլ արևելյան ձեռագրերի և անվանի պրոֆեսորների արխիվների: Այն պարունակում է 52 արկղ՝ բոլորը լի փաստաթղթերով, որոնցից 9-ը կազմում են նամակները, 2 քարտեզ և 15 հատոր փաստավավերագրական տարաբնույթ նյութեր<sup>33</sup>:

Անդրեասի արխիվային և մասնավորապես նամականու՝ մեր կողմից Գյոթինգենում իրականացրած կարճատև ուսումնասիրության արդյունքները որքան անկանխատեսելի, այնքան էլ ուրախալի էին նամակների մեջ զգալի թիվ կազմող՝ հայ ժողովրդի բազում, ինչպես գաղութաբանակ, այնպես էլ Գյոթինգենում առժամանակ ուսման նպատակով բնակություն հաստատած գավակներից ոմանց հետ նրա ունեցած առնչությունները հասկանալու իմաստով: Նամակագրության նախնական ուսումնասիրությունը փաստում է, որ հայազգի մեծ արևելագետը փոխհարաբերվել ու մասնագիտական խորհուրդներ է տրամադրել XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայագիտության զարգացման գործում մեծ ավանդ ներդրած, հանրածանոթ արևելագետներ Յոզեֆ Մարկվարտին (1864–1930)<sup>34</sup>, Հայնրիխ Հյուբշմանին (1848–1908)<sup>35</sup> և Նիկողայոս Մառին (1865–1934)<sup>36</sup>:

<sup>32</sup> É. Roudinesco, M. Plon, Ch. Eissing-Christophersen. Wörterbuch der Psychoanalyse : Namen, Laender, Werke, Begriffe, Wien, 2004, S. 32.

<sup>33</sup> Nachlaß Friedrich Carl Andreas, 14.4.1846–3.10.1930, Niedersächsische Staats- und Universitätsbibliothek Göttingen. Տ. Անդրեասի արխիվին ծանոթացել ենք Գյոթինգենի համալսարանում շուրջ երկու և կես տարի գիտահետազոտական աշխատանք կատարելիս՝ որպես Ալեքսանդր ֆոն Հումբոլդտի անվան մրցանակակիր:

<sup>34</sup> Nachlaß Friedrich Carl Andreas, 1:280.

<sup>35</sup> Նույն տեղում, 1:195:

<sup>36</sup> Նույն տեղում, 1:281:

Օավալուն նամականու մեջ ուշագրավ տեղ են զբաղեցնում հայագգի հայագետների հետ Անդրեասի ունեցած փոխհարաբերությունները: Դրանց մեջ ուսումնասիրված չեն Մխիթարյան միաբանության անդամ, դոկտոր Նիկողայոս Քարամյանցի<sup>37</sup>, պատմաբան, բանագետ Բագրատ Խալաթյանցի<sup>38</sup> և այլոց հետ Անդրեասի ունեցած թղթակցության հիմքերը<sup>39</sup>:

Գյոթինգենի համալսարանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին ուսանած Ռուսական կայսրության հպատակ ուսանողության վերաբերյալ միակ հրապարակումը որոշ պարզաբանումներ մտցրեց Անդրեասի և Գյոթինգենում կրթված հայ ուսանողության փոխհարաբերությունների մասին<sup>40</sup>: Նախքան Անդրեասի ծագումնաբանությունն ու գիտական հարուստ ժառանգության մեզ հայտնի դառնալը, մեզ հետ ունեցած հանդիպումներից մեկի ընթացքում համալսարանի հայտնի պրոֆեսորներից տիկին Տրուդե Մաուրերը խորհուրդ տվեց կարդալ իր հրապարակումներից մեկը՝ շեշտելով, որ իր կատարած եռամյա հետազոտության արդյունքում կարողացել է հայտնաբերել ընդամենը մեկ հայագգի ուսանողի՝ Հովհաննես Նավակատիկյանի<sup>41</sup> անունը (1888–1952): Իմ ավագ գործընկերոջ ուսումնասիրությունը, սակայն, Անդրեասի և Նավակատիկյանի միջև հնարավոր փոխհարաբերությունների մասին ոչինչ չէր խոսում և անգամ չէր էլ հիշատակում Ֆ. Անդրեասի անունը: Վերը հիշատակված ուսումնասիրությունը, սակայն, իմաստալից է այն առումով, որ հնարավորություն է տալիս պարզել, որ ապագայում Երևանի համալսարանի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ (1933–1938), ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան (1933–1934), պրոռեկտոր (1933–1935)<sup>42</sup> Նավակատիկյանը, 1913 թ. ընդունվելով Գյոթինգենի համալսարան և ուսանելով այնտեղ մաթեմատիկա, շատ կարճ ժամանակ անց՝ Առաջին աշխարհամարտն սկսվելուն պես, ինչպես և Ռուսական կայսրության յուրաքանչյուր հպատակ, ստանում է ռազմագերու կարգավիճակ: Ուստի տրամաբանական էր, որ Նավակատիկյանը, ինչպես և ուրիշներ, ուսումը կիսատ թողնելով, պետք է տարվեր ռազմագերիների համար նախատեսված ճամբարները: Սակայն Մ. Մաուրերի հրատարակությունը, իսկ նրանում առկա Նավակատիկյանի լուսանկարը փաստում են այլ իրողություն: Երիտասարդ ուսանողը ոչ միայն շարունակել է ուսումը, այլև բավականին հարմարավետ բնակարան ունեցել Գյոթինգենի լավագույն թաղամասերից մեկում և լքել Գյոթինգենը միայն հեղափոխական Ռուսաստանի ու Գերմանիայի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի հայտնի զինադադարից հետո՝ վերադառնալով իր

<sup>37</sup> Նույն տեղում, Venedig u.a., 1887-1924, 1:220.

<sup>38</sup> Նույն տեղում, Wiesbaden, 1901, 1:223.

<sup>39</sup> Հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ Ֆ. Անդրեասի փոխհարաբերություններն ու առնչության գիտական հիմքերը կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության:

<sup>40</sup> T. M a u r e r. Fremde, Feinde - oder Freunde? Studenten und Gelehrte aus dem Russischen Reich in Göttingen vom späten 19. Jahrhundert bis zum Ende des Ersten Weltkriegs, in: "Göttinger Jahrbuch", Band 54, 2006, Göttingen.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>42</sup> Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Երևան, 1999, էջ 854–855:

ծննդավայր *Դերբենդ*<sup>43</sup>: Բնավ չէինք կարող կասկածել անգամ, որ Նավակատիկյանն ունեցել է մի գաղտնի հովանավոր, որը հոգ է տարել, որ իր հայրենակիցը չհայտնվի ռազմագերիների ճամբարում և, անկախ պատերազմի պարտադրած զրկանքներից, շարունակի ստանալ փափագած ուսումը: Այդ մարդն Անդրեասն էր: Փաստի հավաստումը մեզ հաջողվեց գտնել վերջինիս արխիվում: Իր հեղինակության շնորհիվ էր, որ անվանի գիտնականը կարողացավ կայզերական Գերմանիայի ռազմական նախարարությանը հղած իր գրությունների միջոցով բարելավել ինչպես իր հայրենակցի, այնպես էլ օտարազգիների (օսերի, աֆղանացիների, արաբների) վիճակը՝ Գյոթինգենում և նրա մերձակայքում նրանց գտնվելու անհրաժեշտությունը բացատրելով լեզվագիտական հետազոտություններ կատարելու իր անհետաձգելի պահանջով: Նրան ընդառաջում էին<sup>44</sup>:

Ակնառու իրանագետի կենսագրության ու գիտական մատենագիտության բազում խորհրդավոր և մինչ օրս չբացահայտված էջերը հավելում են Հայկական հարցին առնչվող նրա գործունեությունը: Անվիճելի է, թերևս, որ Արևելքի իմացության այս մեծ շտեմարանը չէր կարող չձգել Արևելքը «նվաճել» ցանկացող գերմանական տարբեր, այդ թվում՝ քաղաքական շրջանակների հետաքրքրությունը: Այս առումով նշելի են «Գերմանական արևելյան առաքելության» հիմնադիր նախագահ Յոհաննես Լեփսիուսի հետ Անդրեասի ունեցած փոխհարաբերությունները: 1910 թ. ապրիլի 8-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում «Արևելյան առաքելություն» ընտրեց նախագահության նոր կազմ՝ Յոհաննես Լեփսիուսի (տնօրեն), քահանա Վալտեր Ռոդենբերքի (փոխնախագահ), Վիլհելմ Հեննինգի (գանձապահ-հաշվապահ), քահանա Յոհաննես Ավետարանյանի, Ֆրիդրիխ Կառլ Անդրեասի և Պաուլ Ռոհրբախի մասնակցությամբ<sup>45</sup>: Անդրեասի արխիվում պահպանվող նյութերը միայն փոքրիկ պատասխաններ են հաղորդում «Արևելյան առաքելության» և Լեփսիուսի հետ նրա առնչությունների վերաբերյալ: Հայտնի է նրա խուսանավոր պատասխանը Լեփսիուսին. վերջինս խնդրում էր տեղեկություններ տրամադրել Օսմանյան Թուրքիայում բնակվող քրիստոնյաների կոտորածների վերաբերյալ, որպեսզի դրանք փոխանցի Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական բարենորոգումների խնդրին նվիրված *Լոնդոնում տեղի ունենալիք կոնֆերանսին*: Այս առումով Անդրեասի պատասխանը հակիրճ էր՝ իր դաշտային հետազոտությունների ընթացքում նա նման կոտորածների ականատես չի եղել<sup>46</sup>:

<sup>43</sup> 1918 թ. հուլիսին վերջնականապես լքելով Գյոթինգենը՝ Նավակատիկյանը (Գյոթինգենում անցկացրած տարիներին հանդես է եկել Նավակատիկյանց ստորագրությամբ) 4 օթևանակից ընկերների հետ երախտիքի խոսքեր է թողել իրենց նկատմամբ ցուցաբերված հոգատար վերաբերմունքի համար (տե՛ս T. Maurer. Նշվ. աշխ., էջ 99–100, 103–108):

<sup>44</sup> Nachlaß Friedrich Carl Andreas, Briefwechsel zwischen Friedrich Carl Andreas und Ogannes Nawakatikian, 1:311; Briefwechsel mit Kriegsgefangenen; Memorandum F. C. Andreas' vom 11.4.1917 zur Verlegung von Kriegsgefangenen in ein Göttinger Lager, 1:471.

<sup>45</sup> A. D a m i a n o v. Die Arbeit der Deutschen Orient-Mission unter den türkischen Muslimen in Bulgarien nach den Quellen im Dr. Johannes-Lepsius-Archiv, Münster, 2003, S. 111.

<sup>46</sup> Nachlaß Friedrich Carl Andreas, Briefwechsel zwischen Friedrich Carl Andreas und Johannes Lepsius, 1901–1917, 1:254.

*Հայկական հարցին առնչվող արևելագետի գործունեության հաջորդ վկայությունը վերաբերում է 1923 թ. Լոզանի կոնֆերանսում դրա քննարկմանը: Կոնֆերանսին հղված՝ հայերի համար Թուրքիայում «ազգային օջախ» ստեղծելու ուղերձի տակ, ի թիվս Թոմաս Մանի, Մարտին Նիպագեի, Յոզեֆ Մարկվարտի, Մարտին Ռադեի և նշանավոր հասարակական այլ գործիչների, գիտնականների, գրողների, դրված էր նաև Ֆ. Անդրեասի ստորագրությունը<sup>47</sup>:*

*Արևելքի մեծ գիտակ Անդրեաս-Բագրատունին աշխարհը նվաճեց անսահմանափակ գիտելիքով և դրանից բխող խոհեմությամբ: Այս «զենքով» էր, որ նա պատմության մեջ մնաց որպես արևելագիտության և իրանագիտության մշտամնա մեծություն:*

ЗАСЛУЖЕННЫЙ УЧЕНЫЙ АРМЯНИН  
ФРИДРИХ КАРЛ АНДРЕАС

*ТИГРАН САРУХАՅԻԱՆ*

Р е з ю м е

Имя одного из выдающихся востоковедов – Фридриха Карла Андреаса (Багратяна, 1846–1930), хорошо известно многим поколениям ученых, специалистам по Ближнему и Дальнему Востоку. Андреас стал первым ученым, прочитавшим манихейские фрагменты из Турфана. На основании этих текстов Андреас определил средние иранские языки и их диалекты, однако ученый не ограничивался только исследованиями по Ирану. Существует достаточно много неопубликованных и неизученных рукописей, текстов и писем, которые до сих пор хранятся в библиотеке Геттингенского университета, ставшего хранителем архивов своих выдающихся ученых.

A DEVOTED ARMENIAN SCHOLAR  
FRIEDRICH CARL ANDREAS

*TIGRAN SARUKHANYAN*

S u m m a r y

The name of one of the prominent orientalists – Friedrich Carl Andreas (Bagratyan, 1846–1930) – is well known to many generations of scholars specialized in the studies on the Middle and Far East. Andreas' main contribution to the scholarship was, that he was the first person to read the Manichean fragments taken from Turfan, based on which he identified the Middle Iranian languages and dialects. Andreas did not limit himself with the studies on Iran. Less has been written about the unpublished and unstudied manuscripts, handwritings and letters that are still kept at the Library of the University of Göttingen, which has become the depository of its large estates.

<sup>47</sup> H. Goltz und A. Meissner. Նշվ. աշխ., էջ 168–169: